



# Հայաստանի Հանրապետության Ջրային նոր Օրենսգրքի նախագծի Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Ռազմավարական Գնահատում (ՇՄԱՌ-Գ)

**Երկիր.** Հայաստանի Հանրապետություն

**Պատվիրատու** ԱՄՆ ՄՁԳ/ Էյ. Ար.Դի

**Ժամկետները** Մարտ – հունիս, 2002թ.


## Տեխնիկական առաջադրանք

1. Ջրային Օրենսգրքի ազդեցության շրջանակների որոշում:
2. Ջրային նոր Օրենսգրքի հողվածների համեմատում գործող Ջրային Օրենսգրքի հետ:
3. Օրենսգրքի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատում:
4. Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա Ջրային նոր Օրենսգրքի կիրառումից սպասվող ռիսկերի գնահատում:
5. ՇՄԱՌ-Գ-ի գործընթացին հասարակության մասնակցության ապահովում:



## Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը

- ✓ Իրականացվել է գործող Ջրային Օրենսգրքի և Ջրային նոր Օրենսգրքի նախագծի համեմատական վերլուծությունը շրջակա միջավայրի վրա ազդեցությունների բացահայտման և բացասական ազդեցությունների մեղմացման տեսակետից:
- ✓ Այն բացասական ազդեցությունները, որոնց մեղմացման համար Ջրային Օրենսգրքի նախագիծը չի նախատեսում միջոցներ կամ նախատեսված միջոցառումները լիովին չեն մեղմացնում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, առանձնացվել են որպես շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա սպասվող ռիսկեր:
- ✓ Ռիսկերը գնահատվել և խմբավորվել են ըստ բաժինների՝
  - կառավարում և օրենսդրություն,
  - ջրային ռեսուրսների պահպանում և օգտագործում,
  - տնտեսական, սոցիալական և առողջապահական հարցեր,
  - բնապահպանական հարցեր:



- ✓ Մշակվել և առաջարկվել են ռիսկերի նվազեցման համար հնարավոր միջոցառումներ:
- ✓ Ուսումնասիրվել է Ջրային Օրենսգրքի նախագծի համապատասխանությունը մի շարք միջազգային կոնվենցիաների համաձայնագրերում և պայմանագրերում ամրագրված սկզբունքներին և դրույթներին:
- ✓ Կազմակերպվել է հասարակական լսում Ջրային Օրենսգրքի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությունը քննարկելու նպատակով, որին մասնակցել են շահագրգիռ նախարարությունների, կազմակերպությունների, ՀԿ-ների ներկայացուցիչներ:

## Աշխատանքի նպատակն է.

Գնահատել Ջրային նոր Օրենսգրքի ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: